

659

---

Lh-45



891. 99

Կար Աշ

ԼԷՕ

# ԱՅԾԱՐԱԾԸ

*[Handwritten flourish]*



ԲԱԳՈՒ

Տպարան Խ. Անասյանի և Կոչարի

1904

3 6 FEB 2013

Дозволено цензурой. Тифлиси 9 февраля 1904 г.



19572-58

Ա.

Փարնան արձակուրդներին ես ստիպուած էի մնալ քաղաքում: Հեռու էր մեր գիւղը, քայց պատճառը հեռաւորութիւնը չէր, այլ այն, որ նա լեռնային գիւղ էր: Մեր գարունը գալիս է ուշ, գալուց յետոյ էլ երկար տանջում է մարդկանց իր ձիւնախառն անձրևներով, թանձր մշուշներով, մանաւանդ անտանելի ցեխերով: Ոչինչ հրապոյր չը կար տարուայ այդ ժամանակ գիւղ գնալու մէջ:

Բայց մի տարի Չատիկն ուշացաւ: Ապրիլի 15-ին մեզ արձակեցին մինչև 29-ը. իսկ դա մի ժամանակամիջոց էր, երբ նոյն իսկ մեր մառախլապատ ու ջրոզող սարերն էլ չորանում են: Եղբայրս եկաւ, ինձ համար ձի բերեց: Իմ դպրոցական կեանքի մէջ դա առաջին անգամն էր, որ Չատիկն տուն էի գնում:

Հէնց այդ պատճառով էլ մայրս դրկեց ինձ մի առանձին, կրակոտ հրճուանքով: Նա հաշուել էր, որ վեց անգամ Չատիկը մտել



է մեր տան դռնով և ոչ մի անգամ չէ գլտակ ինձ մեր օջախի կողքին:

— Մահը մերն է, մենք մահինն ենք, աւելացրեց նա, իր արտասուներու համբոյրները դրոշմելով իմ գէմքին:

Անցեալ տարի մայրս հազիւ էր ազատուել մահից, և այնուհետև այդ խօսքերը սովորական ասացումաձք էին դարձել նրա բերանում: Ամեն մի նշանաւոր օր նա կամենում էր գուշակել, թէ արդեօք դա վերջինը կը լինի իր համար: Եւ այս անգամ էլ նա արտասանեց.

— Ո՛վ դիտէ, եկող տարի...

Բայց չը վերջացրեց: Մի ակնթարթում զգաց, որ ինձ տխուր մտքեր յայանելու համար չէր բերել տուել և շտապեց քաղցրացնել իմ սիրտը, ինչպէս կարող էր: Հարցերի տարափ էր տեղում ինձ վրայ: — Ի՞նչպէս եմ քաղաքում, գլուխս հօ չէ՞ ցուել, անկողինս փափսւկ էր: Մայրական հետաքրքրութիւնը դեռ չը յադեցրած, նա յանկարծ ընդհատեց իր հարցումորձը և յայանեց, որ այժարած Եղօն պսակուել է:

— Հա՞, բացականչեցի ևս սաստիկ զարմացած:

Միայն մայրս դիտէր, թէ ինչ է ինձ համար այդ այժարածը: Նա, ի հարկէ, նրկատեց, թէ սրպիսի մեծ ախորժանքով եմ

Քս լսում այդ նորութիւնը, ու ինքն էլ ծի-  
ծաղկոտ և ուրախ էր: Կարծես պսակուել  
էր մեր տան անդամներից մէկը, կարծես  
այդ հարսանիքը մեր ընտանեկան կեանքի  
մէջ մի նոր շրջան պիտի բաց անէ:

Ես նոյն խոյն մուսացայ, որ քաղաքից  
ընծաներ եմ բերել իմ եղբօր երեխաների  
համար, որոնք շրջապատել էին ինձ, ձգձգում  
էին իմ աշակերտական զգեստը, ճիւղում  
էին իմ գլխարկը, աշխատելով իրանց բոլոր  
մատներով շօշափել և եթէ հնար է՝ նաև  
պոկել նրա վրայ կպցրած պղնձէ նշանը:  
Հարցնում էի մօրս. ե՞րբ, ի՞նչպէս: Եւ նա  
պատմում էր, հիացած իմ վառ հետաքրք-  
րութիւնից:

Այո՛, այդ դէպքը, որ տեղի էր ունեցել  
եօթը շաբաթ առաջ, բարեկենդանին, աւելի  
հետաքրքրական էր ինձ համար քան Զատի-  
կը, որ արդէն սկսել էր իր ազմկալի գնացքը:

Ամեն բան կարող էր պատահել: Բայց  
այժարած Եղօն ամուսնացած -- դա անհա-  
ւատալի էր...

Բ

Ես նրան ճանաչում էի վաղուց, իմ  
մանկութեան օրերից:

Մեր բնակի մեծ մասը Մէհրունց կտուրն  
էր: Մեզ համար մի երկրորդ տուն էր այդ  
կտուրը: Ամառուայ գիշերներն այդտեղ քը-

նելը մի առանձին հրապոյր ունէր եղբայր-  
ներիս և ինձ համար: Այդտեղ էինք խաղում  
մենք, այդտեղից էինք տեսնում գիւղը և  
կամ երբ այլ ևս գործ չէր մնում անելու,  
մօտենում էինք Մէհրունց ահագին երգին  
և նրա ծակով նայում էինք ցած, տեսնում  
էինք թէ ինչ են անում այնտեղ:

Լեռնային հայ գիւղը զարմանալի դրա-  
ցիասիրութիւն է սովորեցնում: Տեղու որում  
լինելով լերան լանջի վրայ, նա այսպէս է  
սահմանում, որ մի տան կտուրը միւսի բակը  
լինի: Մեր կտուրն էլ ուրիշի բակն էր և  
մենք էլ տեսնում էինք երգի ծակով դէպի  
մեզ ուղղած հետաքրքիր աչքեր:

Ընդհանուր կանոն էր՝ բողոքել այդքան  
մօտիկ հարեանութեան դէմ միայն այն դէպ-  
քում, երբ երգի ծակից անդգուշութեամբ  
կամ դիտմամբ հող էին թափում: Խոստո-  
վանում եմ, այդ տեսակ շարութեան համար  
ես չառ անգամ եմ Մէհրունց պառաւի հայ-  
հոյանքներն ու անէծքները կերել: Մի ան-  
գամ նա տանից հանեց և մօրս մօտ բերեց  
մի մեծ կաթսա, որ լիքն էր նոր մէրած  
մաճնով. իմ թափած հողը ծածկել էր մաճ-  
նի երեսը: Այն օրուանից ես վախենում էի  
պառաւից:

Բայց և այնպէս, Մէհրունց տունը դար-  
մանալի համբերող էր այն կողմով, որ նա



դրացիական փոխադարձութիւնից զուրկ էր. նա շունէր իր առջև հարեանի կտուր, ուրեմն չէր կարող քնել ուրիշի կտրին, նայել ուրիշի երգից: Մէհրունց տանից ցած զառիւյսըրը այնքան ուղղաձիգ էր, որ տուն շինել անհնարին էին համարել, և լայն տեղ էր մնացել փողոցի համար, որ պտոյտ էր գալիս Մէհրունց մեծ ցանկապատի տակով ու երկու հինաւուրց մեծ ծառերի միջով գլորուում էր դէպի նեղ ու երկար ձորը:

Սակայն հարեանի կտուրի փոխարէն Մէհրունց տունն ունէր մեծ ու լայն, թէև շատ էլ զառիւյսը բակ: Այնտեղ բուսած էին թթենիներ. դրանց տակ թափուած էին հին մեծ գերաններ, իսկ այդ գերանների վրայ լինում էր Եղօն:

Ես նրան այնտեղ էի տեսնում: Տեսնում էի ամեն երեկոյ, գարնան սկզբից մինչև աշնան վերջը:

Ինչպէս որ Մէհրունց բակից չէր կարող պակասել այծերի հօտը, այնպէս էլ այդ հօտից չէր կարող պակասել Եղօն:

Երբէ՛ք: Ես այժմ էլ աշխատում եմ յիշել գոնէ մի երեկոյ, երբ Եղօն իր տեղը չը լինէր: Բայց չը կայ իմ յիշողութեան մէջ այդպիսի բացառութիւն, և ինձ թւում է թէ նա չէր հիւանդանում, գոնէ այն ամիսների ընթացքում, երբ նա այծեր էր արա-

Ճացնում: Տեսնուած բան չէր, որ նա իր հօտից յետ մնար արօտ գնալիս, թէ վերագառնալիս: Գնալը, քանի երեխայ էի, չէի տեսնում, բայց ամեն օր վերագարձը մեր աչքի առջև էր: Օրուայ որոշ ժամին եկեղեցու դաւթում երևում էին Եղօի առաջընթաց այծերը, երկու կամ երեք հատ: Ապա միմեանց ետևից լոյս էին ընկնում և միւս այծերը, իսկ յետոյ, անպատճառ բոլորից յետոյ, երևում էր ինքը Եղօն:

Նա չէր սխալում նոյն իսկ այնպիսի օրերին, երբ արեգակ չէր լինում: Իսկ մեր դիւղը շատ ու շատ էր տեսնում այդպիսի օրեր: Մշուշը պատել է ամբողջ աշխարհը, չը գիտես՝ արդեօք մթնո՞ւմ է, թէ լուսանում է մռայլ, անլոյս, խոնաւ օրը: Գիտցողը Եղօն է: Այդպիսի օրերին մայրս քանի անգամ ուղարկել է ինձ Մէհրունց կտուրը, որպէսզի իմանամ՝ արդեօք եկե՞լ է Եղօի հօտը:

Միայն այն ժամանակ, երբ հաստատուում էր, որ եկել է, կանայք վերջ էին դրնում իրանց գործին և վեր կենում, երեկոյեան պատրաստութիւններն սկսում:

Շատ հօտեր էին մտնում մեր դիւղը, բայց միայն Եղօն էր, որ երբէք չէր խաբում իր հարևաններին...

Գ.

Միջահասակ էր Եղօն, բարակ կազմուածքի տէր: Նա ջահէլ էլ շէր: Մայրս ասում էր թէ վաղուց թէ նրան այդպէս տեսնում:

Բացի այս տեղեկութիւններէց, ի՞նչ կարող եմ ասել՝ Եղօին նկարագրելու համար: Գուցէ այն, որ նա հագնում էր դեղնաուուն շալի շուխայ, մէջքին կապած ունէր հովւի գորշ, գործած քսակը, սրի մէջ, ի հարկէ, նրա հացն էր պահւում: Նա մի մեծ մահակ էլ ունէր: Բաց այդ բոլորը զիւզական աշխարհում շատ սովորական բաներ են:

Իսկ ի՞նչ էր արտայայտում Եղօի դէմքը, ի՞նչ տեսակ մարդ էր նա: Ահա այդ դժուար է ասել: Մարդու հոգին նրա հայեացքի մէջ է երևան դալիս և այն արտայայտութեան մէջ, որ ստանում է ամբողջ դէմքը. իսկ Եղօի աչքերը տեսնել անկարելի էր. նրա դէմքի վերին մասը մշտապէս ծածկուած էր: Եղօի սովորութիւնն էր փափախը քաշել աչքերի վրայ, այնպէս որ երբ նա կամենում էր քիչ դէպի վեր նայել, պիտի բարձրացնէր ամբողջ գլուխը:

Ինչո՞ւ էր այդպէս անում: Ահա այս հարցն էր, որ գրաւում էր իմ մանկական



Հետաքրքրութիւնը: Ես անթիւ անգամ դի-  
մել եմ մօրս. նա աշխատում էր բացատրել,  
բայց դանազան ենթադրութիւններէից դէնը  
գնալ չէր կարողանում: Հաստատն այն էր,  
որ ոչ ոք չէ տեսել Եղօի ճակատը: Ոչ ոք,  
բացի, ի հարկէ, նրա մօրից, որ Մէհրունց  
սլառան էր: Տարէնը երկու կամ երեք ան-  
գամ, ինչպէս պատմում էր իմ մայրը, պա-  
ռաւին աջողում էր ամբողջ օրեր շարու-  
նակուող աղաչանքներով ու յանդիմանութիւն-  
ներով կակղեցնել Եղօին և լուանալ նրա  
գլուխը: Այդ ժամանակ էլ նա տեսնում էր  
որդու ճակատը:

Միայն շատ ուշադրութեամբ նայողը  
կարող էր նկատել փափախի մազերի տակից  
երկու նեղ ու փոքրիկ աչքեր, որոնք անգա-  
դար ճպճպում էին կիսախուփ, կարծես  
միշտ իրանց առջև փայլուն առարկաներ  
ունէին, որոնց չէ կարելի նայել առանց կո-  
պերը կուշ ածելու:

Բաց էին մնում նրա բարակ ու մեծ  
քիթը, դուրս ցցուած, նիհար այտերը և  
միշտ կիսաբաց բերանը: Նա ունէր փոքրիկ  
բէխեր և շատ ցանցառ միրուք, որ կարծես  
երբէք չէր երկարանում:

Չը գիտեմ դուք ինչպէս կը հասկանաք  
այսպիսի գէմքը, բայց ինձ վրայ նա միշտ

Թողնում էր մի խորհրդաւոր, դժուար հասկանալի տպաւորութիւն...

Դ

Երեւի հէնց այդ է պատճառը, որ եւս այժմ էլ, այնքան տարիներից յետոյ, կարողանում եմ մտաբերել Եղօին միայն մի տեսակ խորհրդաւոր քողով ծածկուած միջավայրի մէջ:

Այն երեկոները, երբ ես տեսնում էի նրան, ի հարկէ, միանման չէին: Կային պարզ, աստղազարդ երեկոներ, կային միանգամայն խաւար ու մառախլապատ, ինչպէս նաև հրաշալի լուսնեակ երեկոներ: Բայց իմ յիշողութիւնը մի տեսակ երեկոների մէջ է ծրարել Եղօին ու այդպէս էլ պահել:

Խաղաղ է շորս կողմը. ամեն ինչ մի տեսակ սպասողութեան մէջ է, կարծես ուզում է վճռել՝ կը լինի՞ արդեօք թէ ոչ:

Այդպէս արամադրողը երկինքն է: Նա ծածկուած է ամպերով, տեղ-տեղ ծանր ու սև, շատ տեղ բարակ, կաթնագոյն ամպերով: Սպասում ես անձրևի, բայց բնութեան մէջ կայ մի առոյգ, յուսատու շեշտ, որ թելադրում է թէ անձրև, երևի, չի լինի. և ամբողջ գիւղը դուրսն է գտնուում:

Նների հաչոց անգամ չէ լսում, կար-



ծես այդ տեսակ գիշերները երկինքը ինքն է հրամայում լուռ ու հանգիստ մնալ: Հեռու հորիզոնի վրայ, մթութեան մէջ միայն իրանց անորոշ ուրուագծերը ցոյց տուող սարերի գլխին, եռանդով փայլատակում է կայծակը, բայց որտա չը կայ: Նա յաճախ այնքան զօրաւոր է, որ լուսաւորում է և գիւղը, նոսր խաւարի միջից հանելով կամ Եղօի այծերի միրուքաւոր գլուխները, կամ կարի ծայրին նստած ալեորի դէմքը, կամ թէ շտապով ինչ-որ տեղ վազող շանը: Մեզմ' կերպով, կարծես վախճանով, օրօրում են թթենիների տերեւները. և երկնային այս խաղաղութեան մէջ աղօթքի մրմունջների նման բարձրանում են մարդկանց հանդարտ ու հեղ խօսակցութիւնները: Նոյն իսկ աղաղակներն անգամ մի կերպ զսպուած ու մեղմ են հասնում՝ բնութեան պէս տրամադրուած մարդու ականջին...

Ձը գիտեմ ինչո՞ւ, այդ տեսակ երեկոների հետ իմ յիշողութեան մէջ կապուած է և գիւղական թոնիրը: Ահա այն բարձր բակում, մեր տան կողքին, հաց են թխում: Հրեղէն սիւնը երբեմն դուրս է թռչում թոնրի միջից, տարածում է մի պայծառ լուսաւորութիւն, որ բաց է անում այսպիսի տեսարան. — այծերի հօտը դանդաղ որոճում է. Մէհրունց հարսը վերջին այծերն է կը-

Թու՛մ: մի քանի բարձրահասակ այծեր գե-  
րանների վրայ են և նրանց մէջ՝ Եղօն իր-  
կարճ երեկօն է անցկացնում:

Ի՞նչ էր նա անում այդպէս անշարժ  
ու անխօս, երեսը դարձրած գէպի գիւղա-  
մէջ: Ինձ թւում էր, թէ նա չէ կշտանում  
գիւղը գիտելուց, չէ՞ որ միայն երեկոյեան  
մի քանի վաղանցուկ ժամերն են առած նը-  
րան՝ աշխարհը, մարդկային աշխարհը տես-  
ներու համար: Մնացած ժամանակը նա բա-  
ցակայ էր այդ աշխարհից և նրա համար ո՛չ  
տօն ու կիրակի կար, ո՛չ անձրի ու ցիխ:

Մտցնելով հօտը մեծ ու զառխլայր  
բակը, Եղօն չէր հեռանում այնտեղից մինչև  
վաղ առաւօտը, մինչև արօտ դնալու ժամը:  
Կարծես իրաւունք չէր համարում գնալ գիւ-  
ղամէջ, մարդկանց շարքերը մանել: Հե-  
ռու ամենքից, նա կարծես խորթ ու օտար էր  
հայրենի գիւղում և գիւղն էլ հաստատում էր,  
որ նա, այո՛, այդպէս է: Հարեան բակերում՝  
մարդիկ էին լինում կանդնած, շատերն անց-  
նում էին փոսոցով, բայց ոչ ոք «բարի երե-  
կոյ» չէր ասում Եղօնն: Նոյն իսկ շատ քիչ  
էր պատահում, որ Մէհրունց տանը ապրող-  
ներից մէկը մօտենար նրան՝ մի քանի խօսք  
փոխանակելու համար...

Եւ նա գերանների վրայից, շրջապա-  
տուած իր սև նոխազներով, նայում էր, նայ-

ում էր իր փափախի տակ կուշ եկած նեղ-  
լիկ աչքերով: Այդ էր այն ամենը, ինչ մտ-  
ցնում էր նրան մարդկանց հասարակութեան  
մէջ. թւում էր թէ նա շատ ուշադիր և հե-  
տաքրքրուող մէկը պիտի լինէր. ուղում էիր  
ասել թէ նրա ականջները մի առանձին քաղ-  
ցրութեամբ, առանձին ախորժակով են ներս  
ընդունում գիւղական ձայները և նա այդ  
ծիծաղների, գանգատների, հայհոյանքների  
հետ մտքով մտնում է ապրող մարդկու-  
թեան ծոցը, ճաշակում է այն ամենը, ինչ  
կայ այդտեղ:

Բայց այդպէ՞ս էր:—Ձը գիտեմ:

Նրա նստած տեղից մի քանի քայլ էր  
մինչև այն տունը, ուր ծնուել էր նա, ուր  
այժմ ապրում էին նրա ծերունի հայրը, եր-  
կու եղբայրները: Բայց նա այդ տան շէմքով  
էլ շատ քիչ էր մտնում, երբ պէտք էր կամ  
ջուր խմել կամ հաց վերցնել: Մէհրունց տան  
մէջ պատահում էին ուրախ և տխուր դէպ-  
քեր. եղել էին հարսանիքներ, մահեր, բայց  
եղօն իրանից այդքան մօտիկ կեանքի ար-  
տայայտութիւններին էլ սիրում էր նայել  
օտարի նման, իր գերանների գլխից: Մայրս  
պատմում էր, որ իմ ծնուելուց մի տարի  
յետոյ մեռաւ եղօն եղբայրը: Երիտասարդ  
մարդ էր, շատ տնարար. ծերունի Աւագը  
իրանց սրահից բառանչում էր, թէ քանդուեց



Մէհրունց տունը. մեռածի մայրն անդա-  
դար ուշաթափուում էր: Հարեաններն ան-  
գամ լաց էին լինում: Իսկ Եղօն: Նա ներս  
մտաւ, կանգնեց շէմքի մօտ, մի թէ երկու  
անգամ հառաչեց և ապա էլի դուրս գնաց:  
Միւս օրը թաղումն էր, բայց Եղօն սովորական  
ժամին քշեց իր հօտը գէպի արօտ: Դեռ ե-  
կեղեցու մէջ չէ եղել նա...

Եւ սակայն, նա չար մարդ չէր: Չարե-  
րին ամենից լաւ ճանաչում են երեխաները.  
Իսկ մեր գիւղում չը կար երեխայ, որ վախե-  
նար Եղօից: Դեռ չէր պատահել, որ մի ան-  
գամ Եղօն մի երեխայից հաց խլէ կամ ծեծէ  
նրան, ինչպէս անում էին հովիւները, այն  
էլ այնպիսիները, որոնք Եղօի պէս տարօ-  
րինակ մարդիկ չէին:

Ահա հեղիկ անցնում է գիշերը: Թթե-  
նիների տակ փնչում: հազում են այծերը,  
թոնրի շուրջը մի քանի կանայք են երևում:  
Ես տեսնում եմ մէկի գէմքը—մի պառաւ  
է դա երկար շամփուրով խառնում է կը-  
րակը: Բոցերը մի անգամ էլ արծարծում  
են ու ցած ընկնում: Ահա հրէղէն սիւնը բո-  
լորովին վերջացաւ և միայն խաւարի մէջ  
երևացող թեժ կարմրութիւնն ու պառաւի  
գէպի առաջ խօնարհուելն ու յետ նստելը  
ցոյց են տալիս, թէ ինչ է կատարուում այն-  
տեղ: Բարձրացաւ, մինչև գիւղի ծայրը

տարածուեց նոր հացի սուր, ախորժելի հոտը: Հարեաններին մի-մի հաց է ուղարկուում, չէ մուսայւում և Եղօն: Գա կարգ է, որ կատարում են կանայք՝ իրանց միայն յատուկ ջերմեռանդութեամբ:

Հեղհեղէ մարում են ճրագները: քու-նը մեզ քաշում է դէպի փափուկ անկողին: Բոլոր այծերը նստոտել են միմեանց մօտ, գիշերային թոյլ լոյսի մէջ նրանք երևում են իբրև անչարժ սև բծերի մի խումբ: Նրանց մէջտեղը, գերանների վրայ, երևում է մի նոյնպիսի անորոշ, բայց աւելի երկար բիծ: Գա այծարածն է, «անտառի մարդը», ինչպէս սովոր ենք մենք անուանել այդ տեսակ մարդկանց:

Բայց ես պէտք է ասեմ, որ «անտառի» բռնը բոլորովին ճիշտ չէ Եղօի վերաբերմամբ: Մեր գիւղը սնի թանձր, լայնատարած անտառներ, որոնք ծածկում են մի քանի լեռնային բարձրութիւններ. ստուերների այդ հսկայական աշխարհը, ուր մանկալու համար պէտք է մի քիչ էլ հսկայ լինել, Եղօի համար չէր:

Երևակայեցէք մի ուրիշ, բայց աւելի ահագին ու երկար սար, լեռի, ամբողջովին ժայռեր, կաղմուած սև, փխրուն քարից: Նա մեր գիւղի ետեւում է, մօտ երեք ժամ ճանապարհ հեռու նրանցից: Տեղ-տեղ այդ



սարը ծածկում են ցածրահասակ թփեր,  
իսկ ամեն տեղ միապագապաղ սև տարածու-  
թեան վրայ ցաք ու ցրիւ երևում են վայրի  
կարճահասակ բոյսեր, որոնք մի խղճուկ ու  
ալքասիկ կենդանութիւն են հաղորդում  
ընդհանրապէս չոր ու ցամաք քարային ան-  
հուն զանգուածին: Ապառաժների կրճքին,  
քարակոյտերի արանքներում վազվզում են  
միայն բարակ խլէզները և անճուռնի քարա-  
թօթօշները: Բայց ողորմած է բնութիւնը.  
կան մի քանի ձորեր, որոնց մէջ պահուել է  
հողը. այդտեղ փոքրիկ ջրեր են բղխում և  
բուսականութիւնը մի քիչ հարստանում է.  
գոյներով աղքատ ծաղիկներ են պատահում  
նօսր ու կարճիկ խոտերի մէջ, իսկ մի երկու-  
երեք տեղ էլ փոքրիկ անտառներ են գոյա-  
նում:

Գա էր Եղօի աշխարհը: Սյդտեղ, ժայ-  
ռից ժայռ թափառելով իւր այծերի հետ  
նա անց էր կացրել ամբողջ տարիներ, ապ-  
րել, մեծացել էր այնպէս, ինչպէս այդ բնու-  
թիւնն էր կամեցել:



85-21561

Ե

Եւ այդ մայրը ամուսնացել էր...

Գեղեցիկ Զատիկ ունեցանք: «Ոսկի օրեր են», ասում էին գիւղացիները: Եւ իրաւ, ամբողջ ժամանակ ժպտուն երկինքը ոսկի էր թափում, իսկ մեր սարերի բնութիւնը գիտէ այդ ճառագայթների տակ բաց անել մի ապշեցնող շռայլութիւն:

Թաթախման օրը գիւղը գրդողում էր աղաղակներից ու իրարանցումից: Բայց տօնի ամբողջ ծանրութիւնը կանանց վրայ էր ընկած: Մայրս շունչ քաշելու ժամանակ շունէր, մեր տունը մեծ է, շատ են մանաւանդ երեխաները, թէև օգնում էին հարսերը, բայց տան մեծի գործը միշտ կրկնապատիկ է: Այնուամենայնիւ, մայրս ժամանակ դտաւ՝ ինձ մի հետաքրքրական նորութիւն էլ հաղորդելու: Նա ասաց, որ Եղօի հարսին էլ պիտի «ժամ հանեն»:

Եկեղեցում՝ կանգնեցի քահանաների ձօտ, որպէսզի կարողանամ տեսնել կանանց վերնատունը: Վերջապէս նկատեցի նրա երկու անկիւնում վառ մօմեր բռնած աղջիկներին: Երևում էր, որ երկու հարս են ժամ բերել: Բայց ո՞րն էր Եղօինը: Փամը վերջա-

Նալու վրայ ներս մտաւ հարսանիքի շորեր  
հագած մի երիտասարդ. ես նրան ճանա-  
չում էի: Նկատեցի, որ նա անդադար նայ-  
ում է դէպի ձախ անկիւնը: Ուրեմն Նղօի  
հարսը աջ անկիւնումն էր: Շատ հետաքը-  
քրական էր—կը գա՞ր արդեօք և Նղօն, որ-  
պէսդի ինքն էլ նայէ այդ երեկոյ իրան պատ-  
նանոյ անկիւնին:

Նա չեկաւ:

Փամը արձակուած էր, բայց ծերունի  
քահանան ինձ պահեց բակում և հարց ու  
փորձ էր անում քաղաքի մասին: Այդ ժա-  
մանակ ես տեսայ սովորական պատկերը,  
գալիս էին Նղօի այծերը, իսկ ամենքից յե-  
տոյ նա ինքը, ինչպէս միշտ, գլուխը բար-  
ձրացրած, որ մտիկ տայ վափախի տակից:

Յայտնի է, թէ ինչ վճիռ պիտի կայաց-  
նէի ես տուն վերադառնալիս. ամեն ինչ  
վկայում էր, որ նա չէ փոխուել և երկու  
կեսնքերի միացումից մի նոր դրութիւն  
համարեա չէր ստեղծուել: Իսկ երբ տեսայ  
Նղօին թթենիների տակ, իր սովորական  
տեղը, բոյորովին անտարբեր դէպի զատկա-  
կան երեկոյի յուզմունքները, ինձ համար  
գրեթէ այլևս կասկած չը մնաց, որ այդ ա-  
մուսնութիւնը մի թիւրիմացութիւն է եղել,  
որ Նղօն ինքն էլ չէ իմացել, թէ ինչ է ա-  
նում: Այդպէս էլ ես ասեցի մեր տանը,

զատկական ընթրիքի վրայ, և ոչ ոք չասաց,  
[Թէ ես սխալուում եմ:

Մարդուն ճանաչելը ամենադժուար բանն է աշխարհում--այս եզրակացութեան վրայ էլ կանգ առանք ամենքս:

Այո՛, դա շատ ճիշդ էր:

Կիրակի առաւօտեան մենք, ի հարկէ, շատ վաղ վեր կացանք: Եկեղեցում մատաղ կար, իսկ գիւղին յայտնի էր, որ մեր տէրատէրներից մէկը սաստիկ շտապող է, սիրում է կարծ կտրել:

Արեգակը արդէն դուրս էր եկել: Ո՛րքան մեծ եղաւ դարմանքս, երբ տեսայ որ Եղօի այծերը դեռ բակումն են: Իրանք, այդ անբան անասուններն էլ, կարծես ըզգում էին, որ մի բան պատահել է, և առաջնորդ այծերն անհանդիստ կերպով գնում էին դէպի բակի այս ու այն կողմը, քաշելով իրանց ետեից ամբողջ հօտը: Քիչ անցած, ես եկեղեցուց տեսայ աւելի զարմանալի բան: Եղօն գնում էր հօտի ետեից, բայց ոչ իր սովորական շորերով: Այժմ նա հագել էր սև շուխայ, գլխին գրել էր «բուխարա» փափախ: Մի խոսքով—հարսանիքի շորերումն էր:

Ես դուրս եկայ այդ նոր մարդուն նայելու: Բոլորովին դժուար կը լինէր ասել, [Թէ դա Եղօն է, եթէ նրա թուխ ու բաւա-



կան գեղեցիկ փափախը էլի դէպի դէմքը  
քաշած չը լինէր: Հովւական մտխրագոյն ու  
կոպիտ քսակն այլևս չէր երևում նրա մէջ-  
քին: Եւ ի նչպէս կարող էր երևալ. նա չէր  
սազի տօնական զգեստին:

— Լա՛ւ է, բացականչեցի ես ժպտալով.  
— նա, ուրեմն, մասնակցում է տօնին...

Անցնելով մի խումբ երիտասարդների  
մօտով, որոնք, ձու էին խաղում, նա կանգ  
առաւ, և մի րոպէ կար, երբ ինձ թւում  
էր, թէ սև ժայռերի վրայ կազմուած այդ  
մարդը մտաւ կեանքի խնճոյքի մէջ, իր տե-  
ղը բռնեց այնտեղ: Դա մի րոպէ էր, կըր-  
կնում եմ, որովհետև Եղծն խսկոյն էլի շա-  
բունակեց իր ճանապարհը: Բայց ես զգացի,  
որ տան մէջ կար մէկը, որ ուղղում էր նրան  
դէպի մարդիկ, դէպի օրուայ չարն ու բա-  
րին:

Եւ ես գիտէի, թէ ս'վ է այդ մէկը...

Բայց հասարակական կարծիքն այդպէս  
չէր դատում: Հասարակական կարծիք... շատ  
մեծ չէ՞ այդ անունը մի խեղճ ու կորած  
հովւի վերաբերմամբ: Ես չեմ ասում, թէ  
ամբողջ գիւղը մտածում էր Եղծի մասին և  
կարծիք կազմում: Բայց չեմ էլ կարող ասել,  
թէ մտածողներ բոլորովին չը կային: Մեր  
թաղի կանայք խօսում, դատում էին Եղծի  
և նրա «խեղճ ջահէլի» մասին. իսկ ս'վ կա-



բող է ասել, թէ զիւզում հասարակական  
կարծիքի առաջին հիմքը կանայք չեն գնում:

Այն հանգամանքը, որ Եղօի ջահէլը  
«խեղճ» անունն էր ստացել, մի վկայութիւն  
էր, որ այդ նորահարսը բախտաւորներից  
չէր: Ճիշդ է, ասում էին, նա խեղճ ու կո-  
րած ընտանիքից էր գալիս եկել, ճիշդ է,  
հասակն առած աղջիկ էր նա, բայց հօ Եղօն  
էլ մի բոի ու անխօս հովւից աւել չէր,  
իսկ տարիքով իր կնոջից երկու անգամ աւել-  
լի մեծ կը լինէր: Ո՛չ, հովւին էլ Աստուած  
չնորհք, հասկացողութիւն է աւել, մինչդեռ  
Եղօն չը գիտէ, թէ ինչ է ընտանիք: Այս-  
պէս դատելու համար կանայք, ի հարկէ,  
ունէին իրանց փաստերը, փաստեր, որոնց  
ազբիւրը, ս՛վ գիտէ, գուցէ հէնց ինքը,  
«խեղճ ջահէլն» էր:

2

Ես այդ կարծիքն աւելի ևս հաստա-  
ու տարածուած գտայ, երբ ամառուայ ար-  
ձակուրդներին տուն վերադարձայ: Մայրս,  
չը նայած որ առաջ Եղօին անպայման դա-  
տապարտողներից չէր, այժմ նոյնպէս խըղ-  
ճում էր նրա կնոջը: Եղօն իր երեկոները  
անց էր կացնում առաջուայ նման: Միակ  
տարբերութիւնն այն էր, որ առաջ նա, նա-

յած եղանակին, քնուժ էր կամ բայ երկնքի տակ կամ գոմում, մինչդեռ հիմա նրա համար պատրաստուած էր անկախ օջախ, առանձին տուն:

Դեռ փոքրիկ ու խախուռ էր այդ անկախութիւնը: Զառիվայրի գլխին, փոքրոցի այն տեղում, ուր երկու հին ծառերն էին բուսած, Մէհրունց ցանկապատն ընդհատուած էր, տեղի տալով ձորին նայող մի տնակի, որ ունէր մի հատ փոքրիկ պատուհան և նրա կողքին մի դուռ: Շինուած էր այդ ընակարանը մեծ խնայողութիւններով, դա համարեա խորանարդ մի արկղ էր. ցածրիկ կտուրով. նրա դռնով հաղիւ թէ մարդ կարողանար մանել ասանց կռանալու: Բայց հին շինութիւն չէր, առջևի պատը նոր էր, նոր էին և այն տախտակները, սրնոցից շինուած էր պատուհանի փեղկը: Մի բան, որ չէին խնայել այդ տանը, անասունների աղբն էր: Մէհրունց բակի բարձր տեղից տարիներ ընթացքում դէպի այդ կողմն էին որբել այծերի, ոչխարների, տաւարի ագրը. կաղձուել էր բաւական աչքի ընկնող մի երկար կոյտ, որ ձգուած էր բակից դէպի ձորը և որի մէջ մինչև կէսը թաղուել էր տնակը:

Մէհրունց Աւագը, ամուսնացնելով իր որդուն, այդ տեղը նշանակեց նրա լնակութեան համար: Եւ նրա նոր հարսը այդ

ազբերի մէջ էլ վառեց գիւղական տան ճր-  
բագը: Յաճախ, երեկոները մեր պարտէզից  
վերադառնալիս, ես մի տեսակ քաղցրու-  
թիւն էի զգում, տեսնելով այն փոքրիկ ու  
համեստ լոյսը, որ երևում էր ուղիղ փողո-  
ցի վրայ բացուող դռան և պատուհանի փեղ-  
կի ճեղքերից: Նա զգալ էր տալիս, որ ներ-  
սում, պատառոտած փալասների վրայ նըս-  
տած, հայ կինը՝ միայն իրան յատուկ յամա-  
ռութեամբ հիւսում է գիւղական օջախ...

Մենակ էր այդ կինը, նա չուներ սե-  
փական թոնիր, սեփական տաշտ՝ հաց թխե-  
լու համար: Այդ կողմից Եղօի տունը դեռ  
խառնուած էր նրա հօր տան հետ: Բայց  
կարելի՞ էր կասկածել, թէ դեղձկուհուն չի  
աջողվի մի անկախ ծուխի բոյօր սեփակա-  
նութիւնները մտցնել այդ խեղճ ու կրակ  
տան մէջ: Պատմում էին, թէ նա շատ է  
աշխատում, բայց Եղօն ժայռի պէս անըն-  
կճելի էր: Եղօն սովորեց այն փոքրիկ փոփո-  
խութեան, որին ենթարկուեցին նրա գիշե-  
րելու տեղերը: Կամաց-կամաց նա մի քայլ  
արաւ դէպի մարդկանց հասարակութիւնը,  
բայց կարծես վախենալով, կանգ առաւ և  
յամառութեամբ հոտտաւ մնած իր գերան-  
ների վրայ:

Մի երեկոյ ես էլ Եղօի նման մենակ  
անշարժացել էի կարի ծայրին: Երկինքի մէջ-



տեղից բոլորակ լուսինը կաթնային մի ծով էր փռել մեր հսկայական աշխարհի վրայ: Աննաման էր բնութիւնը, խրաքանչիւր ծառ, խրաքանչիւր ձայն կախարդում էր...

Շուտով իմ ուշադրութիւնը խլեց մի արտասովոր ուրախ ազմուկ, որ այդ միջոցին մտնում էր գիւղի ծայրով: Ես տեսայ բեռնաւորուած ջորիների երկար շարք և նրանց ուղեկցողներին, որոնք, համարեայ առանց բացառութեան, երեկտաներ էին: Չորիները շարան ընկած, քայլում էին աշխոյժ և թւում էր, թէ նրանք այս գիշեր մի առանձին հաճութեամբ են շարժում իրանց բոժոժները: Նրանք սկսեցին բարձրանալ Մէհրունց փողոցով և ես նկատեցին մեր ջորիները, եղբօրս որդուն՝ փոքրիկ Արտաշին, որ մեծի հովեր առած, երկար ճիւղտն ուսին դրած, քայլում էր իր ընկերակիցների հետ:

Առաջին խուրձերն էին, որ արտերից փոխադրում էին կալերը: Սկսուեց մի կատարեալ տօն բոլորակ լուսնի տակ, մէկն այն գիւղական տօներից, որոնք ծնւում են յանկարծ, ինքաբուզի, առանց ծրագրերնեղի և պատրաստութիւնների: Չեմ կարծում, թէ լինէր աչք ունեցող մի մարդ, որ դուրս չը գար ողջունելու նոր հացի այդ բարեբախտ յաղթական մուտքը և ամբողջ սրտից չը հանկար նրան ամեն բարիք: Այս ու այն



կողմից հարցեր էին տալիս երեխաներին. ո՞ր արտից է, ի՞նչ են անում այնտեղ մնացած մեծերը... Մեր Արտաշը վաղեց ինձ մօտ և տուեց ինձ ցորենի մի խոշոր, գեղեցիկ փունջ։ Ես համբուրեցի նրան և թոյլ առի, որ նա գնայ իր գործին։

Ինձ բերած ընծան ամենասիրուն ապացոյցն էր, թէ ինչո՞ւ այնքան գեղեցիկ է գիւղական այս փոքրիկ տօնը, ինչո՞ւ նոյն իսկ շներն էլ, լեղուները կախ, վազում են տհաա ջորեպանների ետեից և միմեանց հետ հաշտ են ու բարեկամ։ Գեղին, չազ, խոշոր հասկեր... Եւ այս բարիքի մի ամբողջ ծով ծփում էր գիւղի շրջականերում, հնձուորի մանգաղ հրաւիրելով...

Գիւղացու գոհունակութիւնը ա՛յն ատիճան յափշտակել էր ինձ այդ անմահական երեկոյին, որ բաւական ուշ նկատեցի իմ առջև բացուած փոքրիկ տեսարանը — Եղօի կարին էլ մարդ կար, բայց դա Եղօն չէր։ Մինչև կուրծքը հարսանիքի կարմիր քօղով ծածկուած նորահարսն էր բարձրացել իր խղճուկ արկղի գլուխը, լուսինն ու խուրճերը տեսնելու համար։ Թէև ամեն տեղ մարդիկ կային, բայց նա կարելի համարեց չամաչել ու ձախ ձեռքով քիչ բարձրացնելով քօղի ծայրը, մի փոքրիկ պատուհան բացեց իր աչքերի համար։ Նա նայում

էր այս ու այն կողմը, իսկ ես հեռեւում էի նրա գլխի շարժումներին, որպէսզի խանամ թէ ինչով է հետաքրքրուում այդ փակուած, անխօս լեզուն: Եւ տեսնում եմ, երկար դէս ու դէն նայելուց յետոյ նա յանկարծ շուռ եկաւ դէպի այն կողմը, ուր գերաններն էին դարսած...

Այս անգամ երկար էր նրա հայեացքը — ես մինչև անգամ կարողացայ նշմարել նրա դէմքի մի փոքրիկ մասը, որքան թոյլ էին տալիս կարմիր ծածկոցը և երկնքի լոյսը: Մի քանի անգամ նա, ցոյց չը տալու համար թէ շարունակ մի կէտի է նայում, փոխեց իր դիրքը, բայց իրողութիւնը նոյնն էր մնում — նա նայում էր իր ամուսնուն:

Եղօն պառկած էր թթենու տակ, կիսով չափ ծածկուած տերևների ստուերներով: Այժմերը, երևի խրախուսուած երեկոյի պայծառ լոյսերից, թռչկոտում էին գերանների գլուխը և այնտեղից ցած: Եղօն շատ քիչ էր համբերութիւնից դուրս գալիս և նրա սաստոց ձայնը շատ քիչ էր լուում: Միայն երբ նրա աչքի առաջ երկու չարածճի ջահէլներ կռուի բռնուեցին իրանց եղջիւրներով, նա մի ակնթարթում վեր ցատկեց և բռններով երկու ակոյեանների ականջներէից, տարաւ դէպի բակի ծայրը, ապա նորից յետ բերեց ու բաժանեց իրարից. իսկ ինքը էլի

նստեց իր տեղը, էլի գլուխը դրեց գե-  
րանին:

Ջորինները վերադառնում էին կալերից  
նրանք գեռ մի անգամ էլ պիտի գնային  
արտերը և խուրձեր բերէին, ամառնային  
այսպիսի գիշերները գիւղացին ձեռքից շէ-  
տալիս, երբ պէտք է աշխատել: Գարձեայ ըս-  
կսուեց ազմուկը, տներից հարցեր էին առա-  
ջարկուում փոքրիկներին, պատուէրներ էին  
տալիս. ես էլ ասեցի մեր Արտաշին որ վե-  
րադառնայ իր հօր հետ: Այդ միջոցին ինձ  
թուում էր թէ խեղճ նորահարսի հայեացքը  
աւելի ևս յամառութեամբ մեխուեց այծերի  
մէջ պառկած իր ամուսնու վրայ: Կարծես նա  
ուզում էր վեր կացնել նրան, տանել, եթէ  
կարելի է, իր մօտ, որ միասին նստեն, միա-  
սին նայեն արտ գնացող երեխաներին, մի  
բան էլ իրանք ասեն:

Ես այդպէս հասկացայ այդ ծածկուած  
մարդու ծածուկ սիրտը, թէեւ, առհասարակ,  
սիրտ հասկանալը անկարելի է: Ո՛վ գիտէ,  
գուցէ նորահարսը աւելին էր ուզում ասել  
իր ամուսնուն, գուցէ այդ կաթնային ով-  
կիանոսի մէջ նա կը կամենար աւելի հեռու  
գնալ, բաց անել զգացմունքների մի ամբողջ  
աշխարհ իր Եղօի, իր նշանածի առաջ: Գիւ-  
ղացին զգացմունքների մի զանգուած է—մի  
նայէք նրա կոշտ դէմքին, նրա անտաշ լեզուին:



Եղօն միևնոյն դրութեան մէջ մնաց—  
անտարբեր գէպի ամբողջ աշխարհը, որ ու-  
չինչ առնչութիւն չունէր նրա այծերի հետ:

Ո՛չ: Նա մարդկայիր մի այլ, նախնա-  
կան, չքացած կեցութեան ներկայացուցիչն-  
էր: Ես հասկանում էի, որ դա հայի, գու-  
թանի, անչարժ տան մարդը չէ: Նրա մէջ  
ապրում էր հին թափառական հովիւը, որի  
տան յարկը երկնակամարն էր, իսկ հոգան-  
ու հասկացողութիւնը—իր մի քանի անա-  
սուններին ծառայել և փոխարէնը նրանցից  
ուտելիք ստանալ:

Երբ այսպէս էր, կարելի՞ էր զարմանալ  
որ այդ մարդը այնքան ատում էր մարդ-  
կային հանրակեցութիւնը, խորթ էր մնում  
նրա ազմուկին ու իրարանցումներին և ա-  
պրում էր դիւզի մէջ այնպէս, ինչպէս ապ-  
րում էր իր սարի փխրուն, ամայի ապա-  
ռաժների վրայ:

Եւ ես վճռեցի, որ այլևս հետաքրքրու-  
թիւն չէ ներկայացնում մեր հարեան բա-  
կում ապրող նախնական մարդու այդ բե-  
կորը: Նա այնպէս էլ կը մնայ մինչև գե-  
րեզման...



Է

Հետևեալ ամառը ես ուշ գնացի տուն: Վերջին քննութիւններս էին և ինձ յուզողը միայն սակետառ, առաջնակարգ վկայական ստանալու ակնկալութիւնը չէր: Ես նրան շուտ ստացայ և առաջին օրերում նա ինձ համար սակէ ցնորքներ էր հիւսում, օգային ամբոյցներ կառուցանում: Բայց շուտով ես սկսեցի կարգալ և այն՝ ինչ չէր գրուած իմ սիրուն վկայագրի մէջ, այլ երևում էր նրա տառերի և թուանշանների ետևից: Դա ծանր, մաշեցնող հարցն էր՝ ինչ անել այժմ...

Իբրև գիւղացի տղայ, ես պարտաւոր էի ժամանակ չը կարցնել, պարտաւոր էի արագ և ճիշդ կերպով վճռել, թէ ո՛ր կողմից և ինչպէս մանեմ կեանքի մէջ: Եւ այդ պարտաւորութիւնը երկար պտտեցնում էր ինձ քաղաքի լսեղբոյ ու կրակուած փողոցներում: Ես գիմուճներ էի անում, ինզրում էի, իսկ ինձ խորհուրդներ էին տալիս, առաջարկում էին սպասել, այս ինչ օրը գալ և այլն...

Յուլիսը վերջանում էր, երբ ես մտայ մեր գիւղը, որ դռնէ այնտեղ մի բան վըճռեմ: Նոյն երեկոյեան մեր ընտանեկան խորհուրդը քննում, ծանր ու թեթեւ էր անում իմ մտադրութիւնները, ակնկալութիւնները: Հաստատ բան ես ինքս էլ չը գիտէի և

յաճախ նեղ գրութեան մէջ էի ընկնում  
մօրս կամ եղբայրներիս հարցերից: Ես կար-  
ծես կախուած էի օգի մէջ և թրպրտում  
էի, որ ոտներս զնեւու մի յենակէս դանեմ  
մայր հողի վրայ:

Անախորժ գրութիւն... Բայց հայրենի  
ընտանիքներ ինձ հանգստացնում էր, փտա-  
հութիւն ու հանգստութիւն էր ներշնչում իմ  
մէջ: Եւ ես միւս օրը վերցրի հրացանս ու  
գնացի լոր որսալու: Սիրում եմ հանգարտ,  
անլսելի քայլերով թափառել նոր ընձած ար-  
տերի սահմաններում, երբ լորերը տեսանելի  
են դառնում, երբ նրանք դուրս են գալիս  
բաց տեղերը՝ հնձուօրի թափած հատիկները  
կտցահարելու համար: Բայց այս անգամ ես  
ուշացել էի. արտերում այլևս չը կային դար-  
սած խուրձեր և միայն բարակ քամին էր  
խաղում կարճ ցօղունների երկար տարա-  
ծութեան վրայ:

Իրիկնապահ էր արդէն, բայց ես որս  
համարեա չունէի: Գնացի դէպի լեռնակող-  
մերը, յոյս ունենալով գտնել այնտեղ կո-  
րեկի արտեր: Թէև այդ միտքն էլ ինձ մի  
առանձին օգուտ չը տուեց, բայց ես չը զրդ-  
ջացի: Դեռ զարմանալի թարմ ու անուշաբոյր  
էին այնտեղի կանաչները, ի՛նչպէս էին նը-  
րանք սրանչացնում մարդուն տարուայ այս  
ժամանակին, երբ արեգակը այրած ու վեր-

Ղացրած է լինում նոյն իսկ մեր գիւղի չափ բարձր տեղերի բուսականութիւնը: Մի արիւնածարաւ որսորդից ես ակամայ դարձայ խաղաղ զբօսնող, որ բնութեան զարդեր է որոնում:

Ես ճանաչում էի մի այգալիսի զարդ և դա Ուռենիների հռչակաւոր ձորն էր: Հռչակաւոր էր ձորը նրանով, որ այնտեղ ուռենիներով հովանաւորուած մամուսպատ քարերի միջից բղխում էր մի յորդ ու ցուրտ աղբիւր: Ժողովրդի մէջ կար համոզմունք, թէ դա անմահական ջուր է և կարող է կենդանացնել նոյն իսկ ծանր հիւանդներին: Եւ ես տեսել էի գիւղական դեղին մոմեր, կայցրած այգ հրաշագործ ջրի ակունքի քարերին. տեսել էի հալուած հիւանդներ, որոնք եկել էին խմելու և առողջութիւն գտնելու:

Անտարբեր անցնել այգ սրբութեան մօտով չէր կարող ոչ մի գիւղացի: Քայլերս ուղղեցի դէպի Ուռենիների ձորը: Բայց դեռ աղբիւրը չը տեսած՝ ես կանգ առայ: Աղբիւրի գլխին փռուած էր խոտերի և ծաղիկների մի մեծ գորգ, այգտեղ ծունկ չոքած և երկու ձէռքերի վրայ յենուած մի մարդ սողում էր մի փոքրիկ մանուկի հետ...

Ես իսկոյն ըմբռնեցի, որ դա ուխտաւոր հիւանդ չէ: Պարզ էր որ մենաւոր մար-



դը խաղում էր երեխայի հետ, աշխատում էր ամեն կերպ երեխայանալ, ինչ որ բան էր ասում նրան մի տարօրինակ խուլ ձայնով, յաճախ և ծիծաղում էր ու նրա ծիծաղը նման էր նեղ քարային խոռոչում դըրնչող ջրի ձայնին:

Նայեցի ձորին: Այնտեղ ցրուած էր այծերի հօտը, իսկ ուռենիների մօտ կանգնած մի կին նայում էր թէ՛ այծերին և թէ՛ երեխայի հետ խաղացող տղամարդին: Աւելի վերջինիս էր նայում, և նրա ծաղկատար, ընդհանրապէս տգեղ, շատ հաստ դէմքը յաճախ փայլում էր մի հրճուանքից: Ուշ նկատեց նա որ այծերից մի քանիսը աշխատում են դուրս գալ ձորից՝ նրա մի խիստ ուղղաձիգ կողով: Շատ վտանգաւոր ճանապարհ էր դա, և կինը շտապով քարեր շարտեց դէպի այն կողմը, կանչեց իր զիլ ուսուր ձայնով, ապա և վազեց այդ կապը կարածների ետևից: Այծերը վերջապէս յետ դարձան և կինը իր նախկին տեղն էր գրնում, երբ տեսաւ ինձ ու իսկոյն ինչոր բան ասաց ոտով-գլխով երեխայութեան մէջ թաղուած տղամարդին:

Սա բարձրացաւ տեղից, նստեց, նախ երեխան գոգումը դրեց, ապա նայեց ինձ: Եղօն էր... փափախը յետ դրած, ճակատը բաց...



Ամենից անակնկալը, ամենից զարմա-  
նալին այդ էր—ճակատը բաց... Ամբողջ գիւ-  
ղը համողում էր, թէ դեռ ոչ ոք չէ տեսել  
Նղօի ճակատը, բացի, ի հարկէ, նրա մօ-  
րից: Բայց ինչպէս է, որ այժմ ես տեսնում  
եմ նրան, իսկ նա կարծես դիտմամբ չէ  
ծածկում: Կարծես անպատճառ ուզում է,  
որ ամենքը տեսնեն: Մի զարմանալի ճա-  
կատ... Դէմքի միւս մասերի հետ համե-  
մատած՝ նա սպիտակ էր, համարեա ձիւ-  
նափայլ: Քա՞նի տարի էր, նա արևի երես  
չէր տեսել: Այժմ՝ յուլիսեան արեգակը թա-  
փում էր իր ճառագայթները այդ սպիտակ  
ու քնքոյշ կաշու վրայ, և Նղօն... ոչինչ, կրն-  
ճիւններով շրջապատուած իր նեղլիկ աչքերով  
նայում է ինձ, և նրա կարճ շրթունքները  
կարծես ժպտում են, կարծես հարցնում  
են ինձ: անից, թէ ի՞նչպէս է գոգի երեխան:

Դա այն Նղօն չէր, որին ես ճանաչում  
էի տասն և հինգ տարիներից ի վեր: Մօ-  
տենալով նրան, ես ասացի.

— Բարի օր, դրացի Նղօ:

— Ասաւժու բարին, բարով եկար, իս-  
կոյն պատասխանեց նա առամների արանքով:

Առաջին անգամն էի լսում նրա լսօ-  
սակցութիւնը, առաջին անգամն էի տեսնում  
նրան պատասխան տալիս: Բայց ի՞նչ չէր  
առաջին անգամ...

Անմահական ջրից կուշտ խմելուց յե-  
տոյ, ես յետ դարձայ բախտաւոր հօր մօտ:

Ը

— Երեխան քո՞նն է, գրացի Եղօ:

— Հա՛, մատաղ եմ, Աստուծու տուածն է.

Ես նստեցի նրա կողքին: Մի փափլիկ,  
սիրուն երեխայ էր՝ շատ աշխոյժ ու խոշոր  
աչքերով, որոնք խկոյն յառուեցին ինձ վրայ:  
Սկսեցի մատափս խաղացնել նրա ուռուցիկ,  
փոքրիկ շրթունքները. նա յետ տարաւ իր լի-  
քը թշերը և ծիծաղեց: Մի կատարեալ հրեշ-  
տակ էր: Նկատեցի որ հայրը կամացուկ  
սեղմեց նրան իր կրծքին և թեթե կերպով  
հառաչեց:

— Անունն ի՞նչ է, գրացի Եղօ:

— Անթառամ, քահանան գրեց:

— Գու համաձայն չե՞իր, ի՞նչ է:

— Ասում եմ, Աստուծու տուած երե-  
խայ է... անունն էլ քահանան գրեց... Ա-  
սում եմ, անունը որ քահանան գրեց... Աս-  
տուծու կարգն է... Ուրեմն անունը այն-  
պէս էլ կը լինի... Անթառամ...

Նա կարծես զգում էր որ գժուար է  
իրան հասկանալ, ուստի աւելի ևս առաջ  
տարաւ իր բացատրութիւնները: Բայց որ-  
քան առաջ էր գնում, այնքան գժուարա-  
նում էր բանը. խօսքերը նա արտասանում  
էր գէժ ընկնելով, համարեա զօռով:

Խեղճ Եղօ... նոր էր սովորում խօսելը: Ես նկատեցի, որ նա հեշտ պատասխանում է կարճ հարցերին, երբ պատասխանն էլ կարճ է: Այդպէս նա վարժուել էր իր կեանքի ընթացքում: Բայց այժմ նրան յուզում էին էին զգացմունքներ, որոնց պէտք էր բացատրել, փիլիսոփայական հայեացքներ, որոնց պէտք էր արտայայտել: Առանց դրանց անկարելի էր այժմ «եօյա գնալ», որովհետև այժմ այդ երեխան տակն ու վրայ էր արել նրա ամբողջ էութիւնը: Ահա այդ նոր, բարդ զգացմունքները նա սկսում էր «ասում եմ» բառերով, բայց էլի խառնում էր, խօսքի տակն ու գլուխը չէր գտնում և գտածն էլ ճիշդ չէր արտասանում:

Ես այսքանն իմացայ, որ նա իր այդ կցկտուր, անկապ խօսքերով կամենում է ասել, թէ իր երեխան աշխարհ է եկել ամենայն օրինականութեամբ. տուել է Աստուած, մկրտել է քահանան, հետևաբար Անթառամը Անթառամ պիտի լինի, ինչպէս մի ուրիշը Եղօօ է, Մարիամ է, կամ Հոռոմսիմ:

— Ի հարկէ, ի հարկէ, դրացի Եղօ, շտապեցի հաստատել ես. — քո երեխան հրեշտակ է, մեր գիւղում հազիւ թէ դրա պէս մի ուրիշ տխլիկը լինի:

Եղօն ուրախութիւնից ձեռքը տարաւ յօնքերի վրայով. միևնոյն ժամանակ ես լսեցի



մի խեղդուած շնչող: «Աստուած քեզ պահէ»:

Ս. յսպէս ասողն արդէն Եղօն չէր, այլ ձորի կինը, երեխայի մայրը, որ նստել էր մեզանից քիչ հեռու և կողքից նայում էր մեզ, աչքից չը դցելով և այծերին: Ամեն օր նա երեխան շալակած բերում էր այստեղ, իր ամուսնուն փոխարինելու համար. երեխան տալիս էր նրան, իսկ ինքը նայում էր հօտին:

Եւ Եղօն ոչինչ չէր խնայում փոքրիկի համար: Տեսայ նրա կոշտ ձեռքերի ու նախնական մարդուն յատուկ հնարիմացութեան նշանները: Անթառամի վզից կախած էր խոտերի մէջ փաթաթած մի խխունջ: Տեսայ, ինչպէս նա շարունակ ցոյց էր տալիս երեխային մի փայտի կտոր, որի վրայ նա դանակով փորփորել էր մարդու դէմքի նման մի բան, որ աւելի վախեցնել կարող էր իր այլանդակութեամբ:

Եղօն ճանաչում էր մօրս, ինչպէս նաև ուրիշ հարևաններին: Նա դովեց մօրս բայց ես տեսնում էի, որ նրա բոլոր տեղեկութիւնները նորապոյն ժամանակից էին սկըսւում, երեխայի ծնուելու օրից ոչ հեռու: Նա հետաքրքրուեց և ինձանով:

Երեկոյեան ստուերները շատ էին երկարացել: Մենք ճանապարհուցինք դէպի գիւղ: Երեխային շալակեց մայրը: Եղօն քշում



էր այժեքը: Ես նրա հետ էի գնում: Յան-  
կարծ նա կանգ առաւ, վերցրեց հրացանս,  
սկսեց տակին-գլին նայել:

— Լաւն է, բաղաքի՞ է, երեխ, հարց-  
րեց նա:

Ես ցոյց տուի ամեն ինչ, բացատրեցի:  
Բայց նա յանկարծ ընդհատեց ինձ մի նոր  
հարցով:

— Սա մարդ սպանո՞ւմ է:

Ստանալով դրական պատասխան, նա  
շտապով ինձ տուեց հրացանը և առաջ գնաց:

— Ասում եմ երեխատէրը... չը պէտք  
է բռնէ... Որ սպանող է... Ասում եմ այս-  
ինքն չար է... Ձի իմացուի...

Ես հանդստացրի նրան, ասելով որ  
դատարկ է հրացանը:

— Քաղաքում լաւ բաներ կան, հա՞...  
Ասում եմ՝ ո՛վ գիտէ, իսկի խելք չը կտրելի  
բաներ, զարմանալի... Ասում եմ՝ այնտեղ  
մարդ էլ են շինում...

— Ինչ որ սիրտդ ուզէ, դրացի Եղօն:

Դրացիս մի անձկալից, ճնշուած հա-  
յեացք գցեց դէպի այն վիթխարի լեռնա-  
շղթան, որ մեր գաւառի սահմանագլուխն  
է կազմում: Մեր գիւղացիների համար դա  
ծանօթ աշխարհի վերջն էր և ամեն մի  
անծանօթ, անիմանալի բան նրանք տեղա-  
ւորում էին այդ շղթայի ետևում: Եղօն

էլ, երևի, կարծում էր թէ քաղաքը, ինչպէս այդքան զարմանալի աշխարհ, դարձեալ այնտեղ է գտնուում: Ես ձեռով ցոյց տուի բոլորովին հակառակ ուղղութիւն: Բայց նա ուշադրութիւն չը դարձրեց. նրա համար իրողութիւնը չէր փոխուում այն հանդամանքից, թէ քաղաքը այս կողմում չէ, այլ այն կողմում:

Լսուեց երեխայի լացը: Մայրը մտեցաւ, յայտնեց որ հօր համար է լաց լինում: Եւ նորից դերերը փոխուեցան: Հոփուական ցուպը վերցրեց կինը, իսկ երեխային խտտեց Եղօն: Սա դեռ չէր էլ սովորել երեխայ խտտելը: Երկու ձեռքով սեղմել էր նրան իր կրծքին ճիշդ այնպէս, ինչպէս մի ութ տարեկան երեխայ կը խտտէր:

Հէնց որ փափլիկ մանուկը տաքացրեց հայրական կուրծքը, Եղօն էլի կարիք զգաց խօսելու, երկար խօսելու: Էլի կմկմալով, յաղթահարուելով բառերից, ամեն վայրկեան կորցնելով մտքի թելը, նա ասաց ինձ:

— Այսպէս հազար-հազար ուլեր եմ մեծացրել... Ասում եմ, գիտեմ... այսինքն թէ ինչ է փոքր երեխան... Տաք, փափուկ, ասում եմ, թոյլ, վայր գցես, հողին կը տայ... Դժուար է պահելը... Ասում եմ... չը կայ այժի պէս սիրուն երեխայ ծնող... Բայց դէ մարդը ջոկ բանը է... Ասում եմ

օ՛, քա՛նի ուլիկներ եմ պահել մեծացրել փէշիս մէջ, ծոցումս: Սորոր եմ: Անլեզու, պուճուր են, մարդու սիրտը այրում են... Ասում եմ՝ դայլից, թշնամուց, ցրտից պահել եմ շատերին: Բայց դէ մարդը ջոկ է: Ես տեսայ... Ասում եմ, Անթառամի պէս իսկի մի ուլ չեմ տեսել...

Ահա՛ որտեղից էր այդ մարդը վերցրել այնքան սէր դէպի փոքրիկները: Նորածին ուլերին խնամողը ամբողջովին յափշտակութիւն էր դարձել, երբ ծնուել էր ոչ մի ուլի նմանութիւն չունեցող Անթառամը...

Գիւղի վերևում մենք բաժանուեցանք միմեանցից:

Մեր տանը վաղուց գիտէին որ Եզօն փոխուել է, տանու մարդ դարձել: Երեկոնները այլևս Եզօին չէր կարելի տեսնել թըթենիների տակ: Նա կտրել էր բակի մեծ մասը մի բարձր ցանկապատով, ուր և դիշերները փակում էր այժերին: Ինքը կամ իր տան շէմքումն էր լինում նստած, կամ կտուրի վրայ: Եւ շաա քիչ էր պատահում որ հրաշագործ փոքրիկը նրա մօտ չը լինէր:

Օգոստոսի կէսին, ստանալով նամակ, որի մէջ ինձ առաջարկում էին ուսուցչի պաշտօն մի մեծ գիւղաքաղաքում, ես այլ ևս աւելորդ համարեցի տատանուելը ուճանապարհ ընկայ իմ պաշտօնատեղին:



Յղօին այլևս չը տեսայ: Իսկ այն, ինչ որ հիմա պիտի պատմեմ, ես վերջնում եմ մօրս հաղորդածներից:

Թ.

Աշնանը խիտ փոփոխական և վատ էին եղանակները մեր գիւղում: Նկաւ վա-  
ղածամանակ ձիւն. նա հայուեց մի տաք քամուց, ապա սկսուեցին անվերջ խոնաւ օրեր: Գալիս էին անընդհատ անձրևներ, ամեն տեսակ անձրևներ. կամ մանր, ասդի ծայրերի չափ մանր, կամ յորդ-դարնանային, կամ ձիւնախառն—կատարեալ բուք ու բո-  
բան...

Ամեն ինչ փտում, լուծւում էր: Հիւ-  
ւանդութիւններ երևացին անասունների մէջ,  
իսկ շատ չանցած, սաստկացան և մարդ-  
կանց հիւանդութիւնները:

Պարզ երկինք չէին տեսել շաբաթ-  
ներից ի վեր: Ողբում, հառաչում էր Յղօի  
տնակը: Աղբային խոր ցեխերի մէջ թա-  
ղուած, ցուրտ ու ջրօղոզ էր նա և անց էր  
կացնում մռայլ ու յուսահատ օրեր: Նրա մէջ  
չը կար մի ափ տեղ, որ չօր լինէր. ջուրը  
ծլլում էր կտուրից, կաթոցը չէր դադա-  
րում մի բոպէ անգամ, որպէսզի տանը  
աչք բաց անեն: Վառւում էր փոքրիկ օջա-



խը, բայց ծուխը խեղդում էր այնպէս, որ նոյն խկ գիւղացին էլ չէր գիմանում նրան. բայ էին անում դուռն ու պատուհանը, այժմ էլ ցուրտն էր ներս թափւում: Տան ներսը ոչնչով չէր զանազանւում փողոցից:

Ահա այդ թշուառ յարկի տակ էլ մտաւ այն հիւանդութիւնը, որ սկսել էր գերեզման տանել երախաներին: Բկուռո՛ց...

Սարսափահար էր ամբողջ գիւղը: Ինչպէս ընդհանուր գժբախտութեան ենթարկուած մի հօտ, գիւղացիները աւելի մօտենում էին միմեանց, աւելի սեղմւում էին իրար: Արքան կուրծքեր էին ծեծւում, ո՛րքան արտասունք թափուեց: Կտրուած ամբողջ աշխարհից, գլխի վերեւ ունենալով մի պզտոր, ցուրտ ու լացկան երկինք միայն, գիւղը երեխայի նման հեկեկում էր, ողորմութիւն էր հայցում յուսահատ, մատաղներ էր մորթում: Եղօն իր ձեռքով մի լաւ նոխազ մորթեց իր տան շէմքում: Բայց հիւանդութեան չար ոգին ոչինչ պաղատանք ու արիւն չէր ընդունում:

Պատի մէջ շինած մի փոքրիկ խորշում, ուր գիշերները նաւթի ճրագն էր վառւում, պառկած էր Անթառամը: Ամբողջ տան մէջ միայն այդ անձուկ տեղն էր, ուր չէին հասնում կտուրից ներս ներս ծծուող ջրի կաթիլները: Հազիւ էին կարողացել տեղաւո-

րել այնտեղ երեխային, որ առանց այդ էլ սարսափելի դժուարութեամբ էր շունչ քաշում:

Գիշեր է: Նաւթի ճրագը ձեռքին, կանգնած է Եղօն իր սիրուն ուլիկի դիմաց և նայում է, անլերջ նայում: Կարծես նա լաւ զգում է որ երախային ազատելու համար միայն այդ միջոցն է մնում—նայել, նայել...

Երրորդ անգամն էր, ինչ նա դիմում էր իր կնոջը.

— Մաթու աղջիկ, դեղ շե՞ս խմանում...

Գու այսպէս շատ կը լինես տեսած...

Բայց Մաթու աղջիկը միայն կարկուտի պէս արտասուքներ էր թափում: Նա ոչինչ չը գիտէր:

Արդէն կապտել է սկսում պատի մէջ դրած երեխայի սիրուն, լիքը երեսը: Նրան խեղդում են: Այդ լաւ է տեսնում հայրը և այս ու այն կողմ է նայում, ձեռքը մըտցնում է պատի խորշը, ուզում է գտնել այն ձեռքը, որ խեղդում է, ուզում է կռուի բռնուել այդ անգութ խեղդողի հետ:

Նա յետ նայեց, կինն արդէն ծեծում էր ծնկները և մորմոքուելով ասում էր, թէ երեխան ձեռքից գնաց:

— Զա՛ն, Մաթու աղջիկ, դու էլ ես ցաւ խմանում...

Ասաց նա, գլուխը դրեց կնոջ ուսին և իր արտասուքները, իր առաջին արտասուքները, խառնեց նրա արտասուքների հետ:

— Խեղդեցի՞ն, խեղդեցի՞ն, մրմնջաց Մաթու աղջիկը:

Նշոն մի անգամ էլ նայեց մորթուող հաւի պէս թրպրտացող երեխային: Եւ այս անգամ նա դռուաց.

— Այն ո՞վ է, որ խեղդում է երեխայիս:

Ու ճրագը տալով կնոջը, ինքը դուրս վազեց:

Գնում էր խեղդողի դէմ մարդ կանչելու: Սարսափեւի մութ գիշեր էր: Ամեն տեղ միայն անձրևի խուլ, միանման վշշոցն էր տիրում:

Նշոն ծեծեց տանուտէրի դուռը, ուշադրութիւն չը դարձնելով շնահաշոցին, որ բարձրացրեց այդ տարածամ աղմուկը: Գուռը բացուելուն պէս՝ Նշոն ներս ընկաւ և հեալով ասաց.

— Երեխայիս խեղդում են... Ես թագաւորի հպատակ եմ, մի տարի է, մարդահաշուի մէջ էք դրել ինձ ու հարկ էք առնում:

Տանուտէրը նոյնպէս ցաւոտ մարդ էր և շուտ հասկացաւ Նշոին: Արտասուքները կուլ տալով, նա ասաց թէ երեք օր է ինչ

այդ նոյն անգութ խեղդողը տարել է իր մի թուանը, իսկ միւսը հիմա էլ պառկած է:

Յետ է գնում Եղօն, իմացաւ որ մարդահաշուի մէջ գրուածները մի են ցաւի առաջ:

Բայց նրա միտքը գործում է տենդային եռանդով ու նա նոր միջոցներ է գտնում: Գալիս է, մեր գուռն է ծեծում:

—Մի ճա՛ր, Առուշաննայ հարս, ասում է նա մօրս.—քաղաքում մարդ ունիք... Ասում եմ՝ գուցէ քաղաքի մի հնարք իմանաք... Այնտեղ իմանում են, այնտեղ...քոտղան էր ասում—ինչ ուզում ես...

Քաղաքն էլ ոչինչ չէ տալիս: Բայց Եղօն չէ էլ սպասում մօրս պատասխանին: Յանկարծ նա յիշում է անմահական ջուրը: Ու վերցնելով մեր սրահումը դրած փոքրիկ ամանը, վազում է դէպի Ուռենիների ձորը:

Սարսափելի է մտածել որ զիշերուայ այդ ժամին, այդպիսի եղանակին, կը լինի մէկը, որ դուրս գայ մեր գիւղից, միշտ և միշտ դէպի բարձր, դէպի սարերը կը գնայ: Բայց Եղօն մանկութիւնից լսել էր մեծից ու փոքրից, թէ անմահական է այդ ձորի ջուրը, թա նա դեղ է բոլոր հիւանդութիւնների դէմ: Այժմ նա միայն այն գիտէր, որ ուշ է յիշել, որ պէտք է վազել, սար ու ձոր կտրել, որ կարելի լինի մի ժամ առաջ:



հասնել, մի ժամ շուտ հասցնել անմահա-  
կան ջուրը Անթառամին:

Յիշում էր նա կապտած փափլիկ թշե-  
րը, փոքրիկ բերանը, կրծքի վրայ դրած  
թաթիկը: Իսկ սարերում՝ ձիւն էր գալիս,  
բուքն էր բոլորուել...

Նզոն էլ բոլորում էր բուքի հետ, բայց  
վազում էր վազում...

Երբ ջրով լցրած ամանը ձեռքում  
բարձր բռնած՝ մօտենում էր նա իր տնակի  
դռան, արդէն առաւօտեան լոյսը բացւում  
էր: Բայց և ամեն ինչ վերջացել էր...

Երեք հոգի էին Անթառամին գերեզմա-  
նատուն ասնողները—քահանան, տիրացուն,  
որ խտտել էր երեխային, և ինքը՝ Նզոն: Փոս  
փորոզը գեռ չէր վերջացրել գործը, անձրևը  
մազում էր անդադար. ո՛րքան ցեխտա էր  
Անթառամի յաւիտենական բնակարանը.  
երեխան արկղիկ էլ չունէր...

Քահանան այժմ մանաւանդ շտապում  
էր: Ո՞վ գիտէ, եթէ նա այնքան չը շտապէր  
գուցէ Նզոն աւելի ժամանակ ունենար իր  
սրտին մխիթարանք գտնելու: Նա մնաց  
գերեզմանատանը մենակ: Արդեօք ի՞նչ էր  
անում այնտեղ: Պոկե՞ց իրանից մի բան ու  
գրեց Անթառամի խոնաւ ծոցում թէ ինչ-  
էր, բայց այն օրուանից Նզոն սկսեց, ինչ-  
պէս ասում են «բարակ մաներ»:

Տանջուեց ամիսներ. չէր պառկում, շրջում էր իբրև ստուեր: Մանդուն գուրս էին հանել այն աշխարհից, ուր նա ապրել էր երեսուն տարի՝ փափախը աչքերին քաշած: Յնցումները այնքան ուժգին էին, նոր, անձանօթ կեանքը այնպէս անողորմ կերպով սկսեց տակն ու վրայ անել նրա խեղճ միտքըն ու հոգին, որ նա դարձաւ մի փխրուն աման, վայր ընկաւ ու ջարդուեց, գնաց պառկելու իր ուլիկի կողքին:

Ժ

Նորից եկաւ ամառը, նորից նա իր վախարդական հմայքներով ծածկեց՝ թէ արտերը, թէ՛ գերեզմանները, թէ՛ կեանքի գեղաժպիտ յոյսերը, թէ՛ անկենդան աւերակները:

Ես տխուր էի տուն վերադառնում: Մեր գիւղը գեռ չէր մոռացել իր կորուստները: Այս անգամ ինձ գիմաւորեցին լացով. ընդհանուր առէտը մեզ էլ շատ վնասներ էր տուել, մեր երեխաներից մէկն էլ մեռել էր:

Բայց, խոստովանում եմ, ամենից շատ ինձ ցաւեցնում էր այն աւերանքը, որին ենթարկուել էլ այժարած Եղօի տունը:

Մնացել էր միայն Մաթու աղջիկը. նա

վերցրել էր ծնօտի վրայ կապած կարմիր  
կտորը. դա սուգի նշան էր:

Փակ էին Եղօի դուռն ու պատուհանը:  
Ես առաջ էլ շատ էի տեսել այդպէս փակ-  
բայց այժմ—գերեզմանը, յաւիտենական  
ոչնչութիւնն էր այդպէս կանգնել այդ խեղճ  
տան մէջ, ուր նոր սկսել էր մի գիւղական  
օջախ հաստատուել:

Իմ այս տպաւորութիւնը հաղորդեցի  
մօրս: Իսկ նա ցոյց տուեց ինձ եկեղեցու  
մօտ ցցուած ահագին ժայռը և ասաց.

—Տեսնո՞ւմ ես այն քարը: Դի՛ր նրա  
մէջ սիրտ, և նա էլ կը հալուի...







